



Հայկական Կարմիր Խաչի «Կլիմայի Հայկական
Հարթակ» ցանցի ղեկավար պարոն
Ս.Մովսիսյանին

Հարգելի պարոն Մովսիսյան

Հարգելի պարոն Գաբրիելյան

«Հայկական կարմիր խաչ»-ի կողմից իրականացվող «Կլիմայի արևելյան հարթակ» ծրագրի շրջանակում ս.թ. հունվարի 31-ին տեղի ունեցած հանդիպման ընթացքում ներկայացված «Կլիմայի փոփոխության հարմարվողականությունը Հայաստանի Հանրապետության տարածքում» աշխատության վերաբերյալ կարծիք հայտնելու մասին պայմանավորվածության համաձայն առաջարկում եմ:

1. Հաշվի առնելով, որ այդ աշխատությունը նախատեսված է քաղաքացիական հասարակության իրազեկմանն ու ներգրավմանը, նպատակահարմար է նրան ավելի մատչելի ու բացատրական բնույթ տալ,
2. Հայտնի է, որ թեմայի վերաբերյալ կա մեծ թվով մասնագիտական գրականություն, ուստի, հաշվի առնելով աշխատության սահմանափակ ծավալը, նրանում տալ միայն համառոտ, թեզիսային բնույթի նյութ, իսկ հիմնական ու հիմնարար տեղեկության համար տալ հղումներ համապատասխան աղբյուրների:
3. Ի նկատի ունենալով, որ աշխատությունը պետք է ծառայի քաղաքացիական հարթակի գործունեությանը, նպատակահարմար է նրանում մեծ տեղ հատկացնել քաղաքացիական հասարակության, հատկապես գյուղական համայնքների ներգրավման այն գործնական մեխանիզմներին, որոնց մասին ակնարկվեց ու ներկայացվեց հունվարի 31-ի վերը նշված հանդիպմանը:

Առաջարկում ենք նաև մինչ աշխատության թարգմանությունն ու հրատարակումը այն կրկին ներկայացնել հարթակի անդամներին:

Հարգանքով Էկոլոգիական հասարակական դաշինքի համակարգող`

Սիլվա

Ադամյան 6.02.2014